ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

26.08.19 N 14/06.3/14031-19
Ձեր N

«ՀԵՐՄԻՆԵ ՖԱՐՄԵՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԷԴՈՒԱՐԴ ՓՈԹՈՅԱՆԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ, Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 76Շ. ԲՆ.17

Հարգելի պարոն Փոթոյան

Համաձայն Առողջապահության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թվականի մայիսի 25-ին կնքված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2-2» ծածկագրով «Պետության կարիքների համար պատվաստանյութերի մատակարարման» գնման պայմանագրի անբաժանելի մասը կազմող 2019 թվականի ապրիլի 29-ին կնքված համաձայնագիր 2-ի Հավելված 1-ի, Կատարողը պարտավոր էր մինչև 2019 թվականի հունիսի 1-ը մատակարարեր 4400 դեղաչափ, 20,631,600 ՀՀ դրամի Հեպատիտ Ա պատվաստանյութը, սակայն վերջինս չի մատակարարել և չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Առողջապահության նախարարության 2019 թվականի օգոստոսի 9-ի թիվ ԱՍ/13132-19 գրությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ–ին առաջարկվել է կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով՝ վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ Առողջապահության նախարարությունը ստիպված է միակողմանի մասնակի լուծել 2018 թվականի մայիսի 25-ին կնքված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2-2»

ծածկագրով գնման պայմանագիրը, մասավորապես 2019 թվականի ապրիլի 29-ին կնքված համաձայնագիր 2-ը, 20,631,600 ՀՀ դրամ չմատակարարված ապրանքների մասով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

26.08.2019

X

VERIFIED OCSP 26.08.2019 15:47:03 GMT+4

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416

Կատարող՝ Հասմիկ Մնացականյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060-80-80-03/1703